

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ. Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն.- Եր., ԵՊՀ հրատ., 2014. - 624 էջ:



ցերին, և գործնական լուրջ քայլ է արված Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության ամբողջական վերհանման ուղղությամբ:

Ինչպես իրավամբ նշում է հեղինակը, առ այսօր իրապարակի վրա չկա մի ամփոփ ուսումնասիրություն, որը նվիրված լինի երրորդ Հայաստանի Հանրապետության ամբողջական պատմությանը, որ վերհանված ու վերլուծված լինեն հանրապետության 20-ից ավելի տարիների ներքին ու արտաքրն քաղաքականության հիմնախնդիրները, զարգացման պատմական փուլերն ու առանձնահատկությունները (էջ 13):

Աշխատությունում վերոնշյալ հիմնահարցերը լուսաբանվել են համապատասխան արխիվային նյութերի, տպագիր սկզբնադրյուրների, քանդակագործությունների, պատմական ժամանակակից պատմական վայրերի հայկական պատմական գործարքությունների համար և այլ նյութերի հիման վրա:

Սենագրության առաջին գիյում կարևոր տեղ է հատկացվել գորբաչովյան «վերակառուցմամբ» սկզբնավորված Արցախյան հարցի վերաբացմանը, համազգային պայքարի վերելքի հիմնախնդիրներին 1980-ական թթ. վերջնամասում: Կարևոր տեղ է հատկացվել Աղրբեջանի կողմից իրագործված հայության բռնագաղթին իր պապերի հայրենիքից՝ Շամխորից, Ղաշքեսանից, Խանլարից, Գանձակից ու Գետաբեկից և այլ հայկական բնակավայրերից: Գործում սկզբունքային գնահատական է տրվել սումգայիթյան ողբերգությանը, որը որոշակի առումով հիշեցնում էր ազերիների ոճրագործ հայրենակիցներին՝ պատմության անողոր դատաստանին արժանացած երիտրութերի գենոցիդի քաղաքականությանը հայ ժողովրդի նկատմամբ: Մանրագնին լուսաբանվում են 1988 թ. սպիտակյան երկրաշարժին արնչվող հար-

գիտամանկավարժական հասարակության ուշադրությանն է ներկայացվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանի երրորդ հանրապետության պատմությանը նվիրված մեծածավալ աշխատությունը, որում նորովի պատմաքննական վերլուծության են ներարկվել ԽՍՀՄ-ում ընթացած վերակառուցողական գործնաբացներից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածի սոցիալ-քաղաքական, տնտեսական փոփոխությունները, հայկական պետության խորքային շերտերում կատարված տեղաշարժերը:

Պրոֆեսոր Էդիկ Մինասյանի արժեքավոր մենագրության իրապարակումը կարևորում է ուսումնագիտական մտքի հետագա զարգացման տեսանկյունից, քանզի ցուցաբերվել է շահագրգիր և լիովին հիմնավորված մոտեցում պատմաքաղաքական անցյալի և ներկայի հարցերին, և գործնական լուրջ քայլ է արված Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության ամբողջական վերհանման ուղղությամբ:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

ցերը: Էդ. Մինասյանը սթափ, հավասարակշռված հետևություններ է անում 1989 թ. հունվարից մինչև 1991 թ. օգոստոսը տեղի ծավալված ժողովրդական հոգումների նոր ալիքի մասին Հայաստանի Հանրապետությունում և պատմաքննական խորագիտակությամբ վերհանում արցահայության գոյամարտի պատմությունը՝ զուգահեռաբար անդրադարձություն Աղրբեջանի և Հայաստանի հանրապետությունների միջև ռազմաքաղաքական լարվածության խորացմանը, միաժամանակ մերժելով ժամանակավեպ, պատմաքննական առումով ոչ պիտանի գնահատումները և ստահող պնդումները:

Աշխատության երկրորդ գլխում պրոֆ. Էդ. Մինասյանը արժեքավորում է 1990 թ. օգոստոսի 23-ին Գերագոյն խորհրդի կողմից անկախության հոչակագրի ընդունման փաստը որպես նշանակալից իրադարձություն հանրապետության հասարական-քաղաքական կյանքում: Հեղինակը կարևորում է ԽՍՀՄ փլուզման իրողությունը և այդ նոր իրավիճակում Հայաստանի Հանրապետության՝ որպես ինքնիշխան պետության կյայացման ուղղությամբ պետաքաղաքական գործընթացները, ինչպես նաև 1995 թ. ՀՀ Սահմանադրության ընդունման պատմաքաղաքական կարևորությունը: Երրորդ հանրապետության կյայացման ուղղությամբ առաջին քայլերը Էդ. Մինասյանը դիտարկում է Երկրորդ խորհրդային հանրապետությունից դեպի Երրորդ հանրապետության անցման իրավահաջորդության համատեքստում: Երկրորդ գլխի վերջնամասում գիտատեսական բարձր մակարդակով պատմաքննական հետազոտման է ենթարկում Հայոց ազգային բանակի կազմավորման հարցերին՝ որպես ազգային պետության և անկախության պահպանման կարևորագույն գրավականի, դրա հետ մեկտեղ բանակաստեղծ գործընթացներում կարևորում Վազգեն Սարգսյանի և այլ նվիրյալների՝ գեներալներ՝ Գ. Ղարիբալդյանի, Ս. Հարությունյանի, Ա. Տեր-Թադևոսյանի /Կոմանդոս/ և այլոց խաղացած դերը:

Գիրքն ընթերցողին հագեցնում է լիարժեք գիտելիքներով Երրորդ հանրապետության զարգացման տարեգրության ամեն մի դրվագի վերաբերյալ: Հատկանշական է, որ հեղինակի կողմից Լեռնային Ղարաբաղի պատմությունը դիտարկվել է Հայաստանի Հանրապետության հետ մի անխցիկ միասնության մեջ:

«Նկարի ունենալով, - գրում է Մինասյանը, - Արցախյան ազատամարտի նորագույն շրջանի (1988-2012թ) պատմության ողջ կարևորությունն ու ազգային-հայրենասիրական, գիտական և քաղաքական նշանակությունը՝ անհրաժեշտություն համարեցինք շարադրել Արցախի անկախ հանրապետության ամբողջական պատմությունը Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության հետ միասին, որպես մեր ժողովրդի երկու անկախ պետություններ» (էջ 50):

Մենագրության երրորդ գլխում հեղինակը ըստ ամենայնի արժենորում է 1991 թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունացած անկախության հանրաքվեն, որը հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Ասենք, որ այն հայ պատմագիտության մեջ եղակի և հաջողված պատմագիտական աշխատանքն է, որում առաջին անգամ մի ամբողջության մեջ ընթերցողներին և պատմագետներին է ներկայացվել Երրորդ հանրապետության ծնունդի և հետագա զարգացման համապարփակ տարեգրությունը՝ հայկական պետականության նորօրյա ծնունդից սկսած մինչև Արցախյան հերոսամարտի (1992-1994թ.) բովում կյայացած հայկական բանակի լիարժեք կայացումը, նրա կողմից մղված մարտերին հանուն Արցախի ազատագրման և մայր հայրենիքի հետ վերամիավորման և հայ ռազմական կորովի, հայ ռազմիկների փառավոր նոր սերունդի վերածնունդը Շուշիի և այլ քաղաքների համար մղված Քարինտակի և այլ հերոսամարտերում, միաժամանակ խորագիտակ պատմաքանի

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՍՈՅ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

բանհմացությամբ վերիանում ՀՀռազմաքաղաքական և դիվանագիտական աջակցությունը Աղրբեջանի դեմ ապստամբած Արցախին, Հայաստանի Հանրապետության միջազգային դիրքերի ամրապնդումը և բանակցային բարդ և ոչ միանշանակ գործընթացները Արցախի խնդրի շուրջ, սկիզբանայության մասնակցությունը այդ ամենին:

Գրքի չորրորդ գլխում հեղինակի կողմից համակողմանի անդրադարձ է կատարվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային վիճակին, այդ բնագավառներում վերափոխումներին, հասարակական-քաղաքական կյանքի նոր գարգացումներին:

Գրախոսվող աշխատության հինգերորդ գլխում էդ. Մինայանը, գիտական բարեխղծությամբ վերիանելով Հայաստանի Հանրապետության կայացման ու ամրապնդման գործառույթների հիմնախնդիրները 1991-2000-ական թվականներին, կարևոր տեղ է հաստկացնում ինչպես տնտեսության մեջ կուտակված ճգնաժամային երևոյթներին, այնպես էլ ռազմավարական առումով Հայաստանի համար նոր՝ շուկայական հարաբերություններին անցնան հարցերին, բնականաբար սկզբունքային մոտեցում ցուցաբերելով այդ փոփոխություններով պայմանավորված դրական և ոչ դրական «տեղաշարժերին» հանրապետության սոցիալական ոլորտում, բնակչության գրադաժության, սոցիալական կենսամակարդակի և աղքատության հիմնախնդիրներին: Իրական գնահատման է արժանացել սեփականաշնորհման գործընթացը՝ իր բոլոր վայրիվերումներով և բազմաթիվ տարարնույթ, հաճախ նաև չարդարացված սսխալներով և սայրաքումներով հանդերձ: Միաժամանակ հեղինակի կողմից արժնորդում են հասարակական-քաղաքական կյանքի արմատական տեղաշարժերը, դրանցով պայմանավորված միակուսակցական համակարգի փլուզման և բազմակուսակցական համակարգի ծևակորման բազմաբնույթ գործառույթները, սահմանադրական-դատական համակարգի կառուցվածքային և բովանդակային փոփոխությունները իրենց դրական և բացասական միտումներով հանդերձ, ի վերջո կարևորում 1998 թ. քաղաքական ճգնաժամի առաջացման հարցերը՝ դրան հաջորդած խորհրդարանական ընտրությունների և ներքաղաքական գարգացումների շարժադրների բացահայտման հետ մեկտեղ: Այս գլխում առանձնակի ուշադրության են արժանացել նաև ծավալության կյանքի տարբեր կողմերի համակողմանի լուսաբանման հարցերը: Գիտական առումով նորույթ է հեղինակի կողմից Հայ առաքելական եկեղեցու դերին անդրադարձ՝ Հայաստանի անկախության վերականգնման և հանրապետության կայացման գործընթացների համատեքստում: Էդ. Մինայանը կարևորել է ՀՀ միջազգային դրության, ՀՀ ճանաչման գործընթացների բացահայտումը: Հեղինակը խորքային քննարկման է ենթարկել քաղաքական տեսանկյունից խիստ կարևոր ՀՀ հարաբերությունները հարևան երկրների, Ուստանականի և ԱՊՀ մյուս երկրների, ինչպես նաև ԱՄՄ-ի և Եվրոպական մի շարք երկրների հետ:

Գրքի վեցերորդ գլուխը ամբողջովին նվիրված է Հայաստանի Հանրապետության ռազմավարական տեսանկյունից անչափ կարևոր Հայրենիք-Սկիզբաք փոխառնչությունների բազմաբուվանդակ վերահնանարկ: Լուսարանված է սկիզբաքահայ կազմակերպությունների և բարեգործների գործունեությունը Հայրենիք-Սկիզբաք բազմակողմանի կապերի ամրապնդման ու գարգացման գործում:

Էդ. Մինայանի մենագրության յոթերորդ գլխում պատմաքննական կարևորման են ենթարկվել ՀՀ սոցիալ-տնտեսական գարգացման հիմնահարցերը երրորդ հագարամյակի սկզբին, որի հետ մեկտեղ ըստ ամենայնի ուշադրություն է դարձվել

## ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

հանրապետության կյանքի այդ ոլորտներում կուտակված բացասական երևոյթների վերհանմանը, արվել են սկզբունքային և անաչար գնահատումներ: Հեղինակի կողմից պատշաճ գնահատման են արժանացել հասարակական-քաղաքական կյանքի միտումները, արժևորվել են իրականացված սահմանադրական-դատական բնույթի վերածնությունները և դրանց հետևանքները, ներքաղաքական կյանքի տարբեր հարցերի նկատմամբ կուսակցական-քաղաքական ուժերի դիրքորոշումներին և վայրիկ վերումներին, պատերազմի և խաղաղության հարցերում ՀՀ կառավարության վարած ռազմավարության հիմնահարցերը, ՀՀ հարևանների հետ սոցիալ-տնտեսական և քաղաքական-միջապետական գարգացումները:

Աշխատության վերջում, հավելվածի կարգով ներկայացվում են Հայաստանի երրորդ հանրապետության նախագահները, ՀՀ Գերագույն խորհրդի, այնուհետև Ազգային ժողովի նախագահները, վարչապետները, արտաքին գործերի նախարարները, ՀՀ պաշտպանության նախարարները (ըստ պաշտոնավարման տարիների):

Օգտագործելով նորահայտ հսկայածավալ փաստագրական և արխիվային վավերագրեր, որոնց մի մասը վերջին տարիներին է գիտական հետաքրքրությունների տիրույթ տեղափոխվել, հեղինակը հաջողությամբ և համակողմանիորեն է ներկայացրել Երրորդ հանրապետության մաքարումներով ու հերոսապատումներով հարուստ բազմաթիվ զարգացման ընթացքը, միաժամանակ անաչար գնահատականներ տվել սայթարումներին, վերհանել այն լուրջ խոտորումները և ձախողումները, որոնք սոցիալիստական հասարակարգի դեպքի նորին անցափուլում տեղ գտան հանրապետության սոցիալ-տնտեսական, մշակութային ոլորտում՝ հանգեցնելով արդյունաբերական համակարգի ամրողական և գրեթե անդառնալի փլուզմանը, մեծածավալ աղքատությանը և բնակչության արտագաղթին, բարոյաքաղաքական արժեքային հակասական ու ծնախեղված համակարգի ծնավորմանը բնակչության տարբեր խավերի մոտ, խորքային ծնախեղումներին կրթական համակարգում:

**Պրոֆեսոր Էդ. Մինասյանի** մենագրության կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ ամբողջ շարադրանքով անցնում է հայկական պետականության զաղափարը, կարևորվում է պետաքաղաքական անհրաժեշտ կառույցների և մասնավորապես հայկական բանակի դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարում, Արցախի համար մղված 1992-1994 թթ. հերոսամարտում, մասնավորապես նաև Շուշիի և ագերիների տիրապետության տակ գտնված այլ հայկական տարածքների ազատագրման հիմնադրույթին, որոնք անանց արժեք են երիտասարդ սերնդի հայրենափրական դաստիարակության դիտանկյունից: Ըստ այդմ հարկ եղած մոտեցում է ցուցաբերվել ազատագրական պայքարի նորօրյա հիմնախնդիրներին, որի գլխավոր նպատակը ներկա պատմափուլում պետականության պահպանան և ամրապնդման զաղափարն է:

**Պրոֆ. Է. Մինասյանի** կողմից կատարված ինքնատիպ եզրակացությունները և առաջարկած տեսակետները, գիտատեսական մոտեցումները միանգամայն համահունչ են պատմագիտության արդի մակարդակին:

Աշխատությունը մասնագիտական բարձր մակարդակով ներկայացնում է Երրորդ հանրապետության պատմության ողջ ընթացքը, կարևորագույն փուլերն ու իրադարձությունները, պետաքաղաքական և հոգևոր արժանահիշատակ գործիքների ազգանվեր գործունեությունը, տվյալ ժամանակաշրջանում հայ ժողովրդի թե՝ վերելքների և թե վայրէջքների, սայթարումների հետ առնչվող դրվագները,

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

հեղինակը դրսերել է առողջ և զգաստամիտ մոտեցում: Այսպիսով՝ կարելի է գալ կարևոր հետևողայան, որ ամեն մի նման ընդհանրացնող աշխատանքի առկայությունը իրապարակի վրա միանգամայն ողջունելի է, կարևոր իրադարձություն: Ներկայացված աշխատանքի կարևոր արժանիքներից է նաև այն, որ առկա շարադրանքում ընդգծված է Հայրենիք-Սփյուռք փոխառնչություններում հայկական պետականության անփոխարինելի և հաճախմբող դերի գաղափարը, կարևորվում է պետաքաղաքական անհրաժեշտ կառույցների դերը այդ գործընթացներում:

Պատմաբան Էդիկ Մինասյանը իր մեծարժեք ուսումնասիրության մեջ մանրազնին և անաշար քննության է ենթարկվում հայոց պատմության հանգուցակետում գտնվող այն հիմնահարցերը, որոնք առնչվում են Հայաստանի երրորդ հանրապետության ցայսօր չմեկնարանված ու իրավի կնճռուտ էջերի լուսաբանման հետ: Պատմագիտական մոտեցման պատշաճ մակարդակով է Մինասյանը ապացուցում է, որ ինքը իրավամբ պատկանում խորագիտակ և հեռատես այն պատմաբանների նոր սերնդին, ովքեր պատմաքննական անաշար և հավասարակրաված մոտեցում ունեն Հայոց պատմության նորագոյն շրջանի հիմնահարցերի հետազոտման խնդրին: Նրա հետազոտած թեման արդիական է և կարևորվում է Հայաստանի երրորդ հանրապետության պատմության ամբողջացման տեսանկյունից:

Ե. Մինասյանի ուսումնասիրության արդյունքներով կարելի է գալ այն հետևողայան, որ առանձին թերություններով ու անխուսակելի բացքողումներով հանդերձ՝ Հայաստանի երրորդ հանրապետությունը պետական զարգացման տեսանկյունից գործնականում կայացավ և իր տեղը գտավ հայոց երկրում հանրապետական համակարգի պատմաքննական ժամանակագրությունում: Ե. Մինասյանի պատմաքննական անդրադարձը, կարծում ենք, միանգամայն ուսանելի է այսօրվա պետաքաղաքական զարգացման գործընթացների տեսանկյունից: Այստեղ գիտատեսական բարձր մակարդակով քննության է առնվել Հայաստանի երրորդ հանրապետության ամբողջական պատմությունը:

Բարձրարժեք այս աշխատափորտթյան մեջ խորամուխ լինելուց առաջացած տարաբնույթ հարցադրումները, ըստ Էդիկի ամենակին էլ չեն նսեմացնում գիտական և ընթերցող լայն հասարակայնությանը ներկայացված այս աշխատանքի անվիճարկելի արժանիքները: Կարծում ենք, որ պրոֆեսոր Էդիկ Մինասյանի մանրազնին և տրնաջան աշխատանքի արգասիքը հանդիսացող հիմնարար բնույթի արժեքավոր այս մենագրությունն իր միանգամայն արժանի տեղը կգտնի պատմաբանների, ընթերցող լայն հասարակայնության, պետաքաղաքական գործիքների գիտատեսական հետաքրքրությունների գինանոցում:

Ընթերցող հասարակության ուշադրությանը ներկայացված այս ինքնատիպ աշխատության կարևոր նորույթը նաև այն է, որ կազմված է Հայոց պատմության դասընթացի արդի գիտատեսական և գիտամեթոդաբանական պահանջներին համապատասխան: Այսինքն՝ գործնականում կոչված է օժանդակելու պատմագիտական մտքի բարձրացման և աշխատացմանը Հայաստանի Հանրապետության գիտակրթական և ուսումնագիտական համակարգում: Այն համահունչ է այսօրվա գիտակրթական բարեփոխումներով պայմանավորված գործընթացներին, օբյեկտիվության պատասխանում է դրանցից բխող պահանջներին և հիրավի արդիական նորարական հարցադրումներին: Որպես առաջարկություն՝ կարելի է միայն ցանկանալ, որ գիրքը հետագայում պարբերաբար վերահրատարակության ներկայացվի՝ կատարելագործվելով և էլ ավելի հարստացվելով նորանոր

## **ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱԼԱՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015**

փաստերով ու վավերագրերով, առաջադրելով հիրավի նոր մոտեցումներ և կանխատեսումներ՝ հայ հասարակությանը ապագայի ռազմավարական ծրագրերը ներկայացնելիս:

**Վանիկ Վիրաբյան  
Պ. գ. դ., պրոֆեսոր**

**Արարատ Վարդանյան  
Պ. գ.թ., դոցենտ**

**Մհեր Հարությունյան  
Պ. գ.թ., դոցենտ**